

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոր արշալոյս: ԲԲԻԶ.—ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԵՒ-
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿՄԱՐԶԸ: Վեհ. Հայրապետի շնորհակալութեան հեռա-
գիրը Թագաւոր Կայսեր եւ Կայսերական պատասխան. հեռագիր Փոխարքային
Վեհի եւ Թիֆլիսի հասարակութեան կողմից. գոհաբանական մալթանքներ.
Ժամանակաւոր Կանոններ հայոց զոյքերի եւ դպրոցների կառավարութեան
համար:—ԱՐԻՒՆԱԱԼԻՑ ՕՐԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ: Արիւնինեղութեան պատ-
ճառները. Շուշու դէպքի սկիզբը. ընդհարումներ Խաչէնում. Շուշին բա-
նակների բաժանուած. ականատեսների պատմածը Շուշու Հայ-Թրքական
պատերազմի մասին. սպիտակ դրոշ. Թուրքերի պարտութիւնը. հաշտութեան
ձայնը. Neues Freie Presse-ը Շուշուայ դէպքերի մասին. Բագրի վիճա-
կը Շուշու կոտորածի ժամանակ. կոտորածի առաջին օրը. հրդեններ Բա-
լախանի եւ այլուր. ոմբակոծութիւն. հայերը զինաթափ. զինուորների վար-
մունքը հայերի հետ. հայերն անպաշտպան. Բալախանի հայերը հեռա-
ցուած. Թուրքերի կողք ի հաշտութիւն. յարձակում Բիրթլէյրաթի հայերի
վերայ. հայերը նորից զինաթափ. 13 տարեկան հայ հերոս. դէպքերը Սպի-
տակ եւ Սեւ քաղաքներում. Զանգեզուրի Թուրքերի յարձակում-
ները. Խշան Նապօքսնի վկայութիւնը. դժբաղտութեան պատճառներն ու
առաջն առնելու միջոցներ. կառավարութեան ծեռնարկած միջոցները. Փո-
խարքան Բագրում. հաշտութեան հանդիսաւոր կնքում եւ դարձեալ կոտո-
րածներ. ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ: Կայսերական մանիթեստ. Դումայի կա-
նոնները. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ: Նամակներ խմբագրութեան:

ՆՈՐ ԾՐՁԵԼՈՅՍ

Բնութեան մէջ սքանչելի և մարդկային զգացմունքների
վրայ խորին տպաւորութիւն թողնող վայրկեաններից մէկն է
արշալոյսը. կենդանացուցիչ արեգակի առաջին ճառագայթներն
ընկնելով երկնքի ամպերի և բարձրաբերձ լեռների գագաթնե-

րին՝ լոյս են սփռում խաւար մթնոլորտի մէջ և հետզհետէ կենսատու ջերմութիւն տարածում երկրի վրայ, Զուարթանում է բուսականութիւնը, արթնանում է կենդանական աշխարհը, մարմինը կաղղուրող քնից զարթնում է մարդ արարածը և արևելքի ոսկեճանանչ ցոլքերի ներգործութեամբ խորասուզուելով իւր մտքի անսահման էութեան մէջ՝ հրճւում կամ զառնութեամբ է լցուում:

Բնութեան արշալոյսի նման կենսատու ոյժ ունի նաև մարդկային կեանքի արշալոյսը՝ լինի այդ անհատական, հասարակական կամ թէ ազգային կեանք: Ո՞րչափ յոյսեր, իղձեր, բաղձանքներ է ներշնչում մերձականներին անհատական կեանքի արշալոյսը, ո՞րչափ գեղեցիկ զաղափարներ, սկզբոնքներ, իդէալներ և ապագայ գործունէութեան ծրագիրներ է շաղկապում հասարակական կամ ազգային կեանքի արշալոյսը:

Հասարակական կեանքի արշալոյսին մարդիկ նորոգուում են հոգեով ու մտքով, թողնում են նախկին խաւարի ազգեցութեամբ առաջացած դանդաղութիւնն ու անտարբերութիւնը միմեանց դէմ տածած անվստահութիւնը և աշխատում ընդհանուր ուժերով դէպի առաջ դիմելու, կատարելագործուելու և լաւագոյնը լաւից գերադասելու:

Թէ բնութեան արշալոյսի և թէ անհատական ու հասարակական-ազգային կեանքի արշալոյսի բոլոր հրաշալիքների հետ շաղկապուած է նաև մի բացասական երկոյթ, որ երբեմն տխուր խորհրդագործութեան ասիթ է տալիս. արդեօք գեղատեսիլ և մարդուս աչքին ու մտքին հրճուանք պատճառող արշալոյսին պայծառ ու լիակատար, յարատե լոյս պէտք է յաջորդէ, թէ քամիների հոսանքները կարճատե խաղաղութիւնից յետոյ, նորից իրար խառնուելով, փոթորիկ պէտք է առաջացնեն:

Հայ ազգի հասարակական կեանքը դարերի ընթացքում գեղանկար արշալոյսներ շնտ է ունեցել, բայց տարաբաղդաբար, լիակատար լոյսի չէ փոխուել. երբեմն հեռուից փշող քամիների ուղղութիւնը փոխուելով փոթորիկ է առաջացրել, երբեմն էլ ինքներս արշալոյսից արդէն կուրանալով՝ կատարեալ լոյսի չենք արժանացել:

Այժմ էլ հայութեան մի խոշոր հատուածի հասարակական կեանքի համար մի նոր արշալոյս է ծագում. անվստահութեան, անարդարութեան և զուր հալածանքի խաւարը յետ է մղում, ազատ ասպարէզ է բացւում ինքնուրոյն հասարակական կեանք ստեղծելու, քաղաքակրթուելու, մայրենի լեզուն ու գրականութիւնը մշակելու, սերունդ կրթելու և որոշ իդէալների ձգուելու:

Եւրոպական ազգերի քաղաքակրթութեան պատմութիւնից յայտնի է թէ ըշշափ մեծ նշանակութիւն ունի մի ազգի բարոյական ու տնտեսական զարգացման համար նոր սերնդի ուսումն ու դաստիարակութիւնը. առողջամիտ դաստիարակութիւնն ու գիտութեան արդիւնքների վրայ հիմնուած ուսուցումը բարձրացնուած է հասարակական կեանքի բարոյական ու տնտեսական զարգացման աստիճանը և կենսունակ դարձնուած ամրող ազգը: Կեանքի մրցման մէջ հետզհետէ պէտք է թուլանայ կոպիտ ոյժի նշանակութիւնը և բարձրանայ ուսման ու գիտութեան ազդեցութիւնը:

Մեր այժմեան հասարակական կեանքի արշալուսը քաղաքակրթական մեծ նշանակութիւն կարող է ունենալ մեզ համար, եթէ անցեալի դառն փորձերից խրատուելով՝ կարողանանք լիովին օգուտ քաղել մեզ տուած ազատութիւնից և լուրջ, կայուն սկզբունքների վրայ հիմնուելով՝ կազմակերպենք մեր դպրոցական գործը, առանց շուտափոյթ կարգադրութիւններ անելու և ապագայուած դժուար ուղղելի սխալմունքների մէջ ընկնելու—Անցողակի նկատենք, որ մեր հոգևոր բարձր վարչութիւնը հենց առաջին քայլափոխին սխալ կարգադրութիւն արեց՝ ամբողջ դպրոցական գործի սկզբնաւորութիւնը յանձնելով մի քանի պարոնների, որոնք թէ իրենց մասնագիտութեամբ և թէ զբաղմունքով մօտիկ ծանօթ չեն կարող լինել դպրոցական գործին. Քանակ-երեսուն տարի առաջ գուցէ ներելի լինէր, որ հիւանդին բժշկելու համար՝ իսկական բժշկի փոխարքն «հէքիմ» կանչէինք կամ դատարանական գործի համար՝ փրաւաբանի փոխարքն՝ «արլակատ»։ այն ժամանակ ներելի էր նոյնպէս դպրոցական գործի ղեկավարութիւնն ու տեսչական պաշտօնները իրաւաբաններին ու բժիշկներին յանձնել, բայց այժմ երբ ունինք մասնագիտ մասնկավարժներ և երկար տարիների ընթացքուած փորձուած և հմուտ ուսուցչական խմբեր, ներելի չէ այդ։

Գործ շատ կայ անելու, պէտք է լրջօրէն, սիրով և միաբան աշխատենք. պէտք է առանց շտապելու, ուսումնասիրելով և քննադատելով մի ամբողջ դպրոցական սխատեմ կազմակերպենք. միայն ծխական դպրոցների խնդրով չը պէտք է բաւականանք. մեր թեմական դպրոցների կանոնադրութիւնները վաղուց արդէն հնացել և չեն համապահանուած ժամանակակից մասնկավարժական սկզբունքներին ու պահանջներին, պէտք է փոխել, նոր ծրագիր կազմել, դասարաններ աւելացնել, մանկավարժ ուսուցիչներ պատրաստելու խնդիրը պարզել վարչա-

կան անձանց իրաւանց սահմանները ճշտիւ որոշել և այն,

Մեր հասարակական կեանքի նոր արշալոյսը թէև բնաւ-
կանից աւելի կարմրութիւն ունի—արիւնանե՛րկ արշալոյս—
բայց և այնպէս այդ տխուր հանգամանքը թող մեզ չյունահա-
տեցնէ. բոլոր սրտով ու հոգով նուիրուենք գործին և աշխա-
տենք, որ յաջորդ սերունդները մեզնից աւելի լաւ օրեր տես-
նեն:

ԲՐԻՋ

Քառորդ դար է արդէն, որ հայ ազգը յետադիմում էր
Ռուսիայում, յետադիմում էր լեզուով, ազգային կեանքով և
ներքին ինքնուրոյնութեամբ, որին վտանգ էին սպառնում հպա-
տակ ազգերի երդուեալ թշնամինները—վերջին երկու տասնա-
մեակի երկրիս կառավարիչները: Սոցանից մանաւանդ իշխ. Գօս-
լիցինը և հանգ. Պէտքէն աշխատեցին մի մի ամուր պատնէշ
յօրինել սրածայր փշերով՝ հայ ազգի և ոուս կառավարութեան
միջն, որոնք ամբողջ հարիւր և աւելի տարիներ ապրել էին
միասին, անանջատ կեանքով, առանց խտիր դնելու իշխողի և
հպատակի միջն:

Վերջին երկու տարին մանաւանդ այդ հալածանքն հասաւ
իւր գագաթնակէտին և եղան ժամանակներն, երբ հայը Ռուսիա-
յում երկնչում էր իւր ազգութիւնը յայտնել, այն հայն, որ չէր
խնայել բազմից իւր արիւնը թափել Կովկասի նուաճման գոր-
ծում:

Սակայն հայ ազգը պատուով քամեց այդ դառնութեան-
բաժակը և ապացուցեց, որ չքաւորութեան և մուրացկանու-
թեան մէջ մեծ տարբերութիւն կայ, որ դոքա հումանիշ բա-
ռեր չեն:

Մենք միշտ այն համոզմունքն են ունեցել և արտայայտել
հրապարակով, որ դա անցողական մի բան է, որ չէ կարող Պ-
Բուրգի կառավարութիւնը մտածել այն եղանակով, ինչպէս որ
չափ ու ձև էին անում կառավարութեան անհեռատես գործա-
կանները, որ Ռուսիոյ մեծազօր թագակիրները Հայոց ազգի բա-
րօրութիւնը միշտ համարել են իրանց սրտին մօտ և հային
մերձաւոր բարեկամ մօտաւոր Ասիայում լոյս և քաղաքակրթու-
թիւն տարածելու:

Եւ մեր գուշակութիւններն իրականացան:

Այսօր Հայ ազգը կարող է նորից իւր սգաւոր երեսին
ժպիտ բերել. զնորհիւ Կովկասի նոր փոխարքայ Կոմս Վորօն-
ցով Դաշկօվի լուսամիտ առաջարկութեան Ն. Մ. Թագաւոր
Կայսը մի հրովարտակով տիրաբար պարգևեց Հայ ազգին իւր-